

րագալից, հետեակէս «Սորակալ»ը կարելի էլ փոխել «Խոռակալ»ի և ոչ կարդալ «Խոռակետ»։ Արեւելոյս նմանութիւն մը չի փոխեր երկու բառերու տարբեր իմաստն և նշանակութիւնն։ Ոչ միայն ատերեոյթ նմանութիւնն, այլ մի և նոյն բառն մեր և օտար լեզուներու մէջ ևս, տրամագծապէս տարբեր իմաստներ ունին, զոր օրինակ այր = մարլ, այր = քարայր, ակն = աչք, ակն = ազնիւ քար, հոր = ջրհոր, խոր, հոր = փեսայ և այլն։ Ուստի Խոռ ոչ է Ախոռ. և ոչ Խոռակետը, Դաւթի որդիք՝ կրնան լինել «Ախոռակետը» արքային Պարսից։

Ուրախ ենք որ բանասէրն իսկ փոքր ինչ գլխի հիասթափուած կը թո՛ւր այս ակնառու նմանութենէն և անդրադարձնել կու տայ թէ «մեր դասականներն» «Խոռակալ»ն և «Խոռակետ»ն միայն ԱՅՈՒԱՊԵՏ իմաստով հասկացեր են, առանց միտ զննելու որ իրենց (միայն իրենց) ըմբռնու մով Դաւթի որդիներու պաշտօնը կը մըթագնի». ոչ թէ կը մթագնի միայն, այլ և կը կերպարանափոխի։ Ինչ օգուտ ուրեմն ասել. «ինչ որ ալ ըլլան տրուած մեկնութիւնները՝ մեզի համար սա միայն ստոյգ է թէ «Խոռակալ» և «Խոռակետ» չեն կրնար իրարմէ տարանջատուիլ, ո՛չ ծագումով և ոչ նշանակութեամբ»։ Այս համոզումն ոչինչ չ'ասեր ինդրական «Սորակալ»ի մասին, վասն զի հարկաւոր էր ասպացուցանել թէ «Խոռակալ»ն ո՛չ ծագումով և ոչ նշանակութեամբ կը տարանջատուի «ախոռակետ» չն, որ երկիցս կրկնուած է Ռիզանդի մէջ իր նշանակութեամբ անանջատ «Սորակալ»էն։ Համոզիչ պիտի լինէր վարդանանի ձեռնարկութիւնն՝ եթէ կանխէր Դաւթի որդիներու տրուած տիտղոսն «Խոռակետը»ն բացատրէր, և խոս բառի նշանակութիւնն ստուգէր հանդէպ բացայայտ «տիտղոս»։ Հիւպշման իւր բառգրքին մէջ «Խոռակետ»ի դէմն հարցական մը դրած է, մինչ ինքն ալ ՀԲ. Թիւրքացեանի և այլոց պէս, արքայորդոց դիրքէն կրնար մակարեւել՝ «բարձրութիւն մը, վսեմութիւն մը պատուի

և բարձի»։ Մենք ալ որ հարցական նշան զննելու սովորութիւնն ունեցած ենք, մեր չզիտցածն չըսելու համար, այս տեղոյս մէջն թերևս անցնէինք նոյն նշանով, եթէ հարկն չստիպէր ըստ մեր տկար կարծեաց, ճշդել ըստ կարեւորն «Խոռակետութեան» պաշտօնը՝ զոր ունէին Դաւթի որդիք իրենց հօր արքունեաց մէջ, ցուցանելու համար թէ զաղափարի շարակարգութիւն մը չկայ զայն համեմատելու Պարսից արքայի ասպաստանի «ախոռակետութեան» հետ, հետեակէս «Սորակալ»ն անձեռնմխելուրէն թողնելու է իւր մթին վիճակի մէջ, որ է ԱՅՈՒԱՎԱՅՈՒՆԹԻՒՆ իւր հարագատ լեզուի նշանակութեամբ։

Հ. Գ. ՆԱԶԱԳԵՏԱՆ
(Շարունակելի)

ՀԱՅ ԶԵՆՈՎԻՐ ՂՈՒՐԱՆ ՍԻ Ի ՀՆՂԻԿԱ

(Թրգ՝ Սրբէանս Վարդգէսի Իւրփոյս)

Յորդորանօք և աջակցութեամբ գրասիրին Յովհաննու Ալզաւեան հաստատեցաւ յամին 1828 Հայկական Մատենադարան մի ի «Հայկեան Մարդասիրական Ճեմարանին» կալկաթա քաղաքին՝ «Արարատեան գրադարան» կոչեցեալ, ուր յանցանել ժամանակաց հաւաքեցան բազում Հայ մատենար, թէ՛ ձեռագրեալ և թէ՛ տպագրիք, և ես լուեալ եմ ի նախկին արակերտացն Ճեմարանին՝ որք յոտս Յովհաննու Ալզաւեանի էին աշակերտեալք, թէ գտանէին մի հազար հատորք «յԱրարատեան գրադարանին» 50 ամօք յառաջ։

Յաւուրս ուսանողութեան իմում ի Մարդասիրական Ճեմարանին յամին 1890, տեսանէին ի բաց գրադարանի երեք տխուր բեկորք միայն համբաւեալ մատենադարանին, — քանի մի պատաստուն և անկազմ գրեանք — իսկ ի ձեռագիր մատենից և ո՛չ մի նմոյշ, զի մինչ իսպառ անհետացեալ էին այնորիկ յերեսաց եպերելի անհոգութեան Հոգաբարձուացն ժա-

մանակին, որը թողեալ էին զինամակալութիւն գրադարանին ի ձեռս անվստահելի և բարդախնդիր անձանց, իբր տասնեակ ամօք յառաջ Եւրասիացի՝ այն է խառնածին (eurasian) այրին Կ. Պօլսեցի Հայ վարժարանին «Մարդասիրական ճեմարանին» քաղաքիս՝ եկն առ իս վաճառել զՀայ տպագիր մատեանս հանգուցեալ ամուսնոյն իւրոյ կարապետի Պետրոս Մուրատի. այլ որովհետև մատեանքն էին ըստ մեծի մասին դարձողական գրեանք և վէպք յաշխարհիկ լեզու, որք չունէին վասն իմ հրատար բնաւ, ուստի զգնեցի զայն, այլ յետոյ յորդորանօք իմով գնեցան այնորիկ ի բարեկամէ ումեմնէ գրասիրէ վասն 150 առփեաց կամ տասն անգլիական ոսկւոց: Հարցի ցնա եթէ ո՞նէ՞ր Հայ ձեռագիր մատեանս, և ահա ի մեծի զարմանս իմ և զայրոյթ ասաց այրին այն սեւամորթ, թէ գտեալ էր ի միջի Հայքէն մատենիցն ամուսնոյն Հայ ձեռագիր Ղօբան մի, զոր արդէն վաճառեալն էր Հնդկի — Մահմետական իշխանուհւոյն որ ի Բօպալ վասն հինգ հարիւր ոսփեաց՝ որ համապատասխանէ 33¹/₂ անգլիական ոսկւոց ըստ արդի փոխանակութեան:

Արդ որովհետև ես ի մօտոյ ճանաչելի զամուսին կնոջն և քաջատեղեակ էի հանգամանացն զալստեան նորին ի Հնդկիս, ուստի լաւ գիտէի թէ չէր բերեալ նա զայն ձեռագիր ընդ իւր ի Կ. Պօլսոյ՝ զի ի խնդիր բարդին եկեալ անկեալ էր աստ, անոք, անօգնական և անգրամ. և հոգարարձուք ճեմարանին գթացեալ ի վերայ նորա՝ ընկալեալ էին զնա ի ճեմարանն նախ որպէս «անտես», այլ յետոյ առ ի չգոյէ արժանաւորաց, եղև ուսուցիչ Հայ լեզուի ի ձեմարանին, թէպէտև չգիտէր զաշխարհիկ լեզուն իսկ Եւսպէս, իմացայ անմիջապէս թէ ուստի գտեալ, դու ասա բարձեալ՝ իւրացուցեալ էր նա զայն մատեան հագուագիւտ, այլ սակայն յետի էր այլ ևս ջանալ և փրկել զայն վասն ազգին զի գնացեալ, անցեալ և անկեալ էր այն ի ձեռս օտարաց և այն ևս Մահմետականաց: Հետաքրքիր էի սակայն իմա-

նալ զհանգամանաց ձեռագրին և գէթ այնու զովացուցանել զծարաւ հնասիրաց ազգիս, այլ սակայն պակասէր ինձ առիթ գնալոյ ի Բօպալ և ի մօտոյ ուսումնասիրել զհնագրական արժանիս այրի՝ հնախուզական ճաշակաւ՝ յօգուտ Հայ հնագրութեան:

Էս այն ինչ յակգրան անցեալ տարւոյն խորհէի զնալ անդ ի խնդիր Հայ արձանագրութեանց՝ և ահա առիթ բարեպատեհ ներկայացաւ ինձ զի Յիսուսեան լաւ բարեկամ իմ հնագէտ ծանոյց ինձ թէ գնալը և ինքն ի Բօպալ հնագիտական ուղևորութեամբ, ուստի խնդրեցի ի նմանէ զնալ ի պետական Մատենադարանն տեղոյն և զբել ինձ զհանգամանաց Հայ ձեռագրին որ անդ: Յորդորանօք բարեմիտ բարեկամիս առաքեցաւ ինձ աստ ձեռագրին այն յամսեանն Մայիսին անցեալ 1922 ամին, այլ յորժամ բացի զայն՝ տեսի ի ցաւ սրտիս թէ պակասը ճակատն յորմէ հնար էր իմանալ զթուական և զտեղի թարգմանութեանն որպէս և զըջութեանն իսկ:

Բարեբաղդաբար ի վերջ ձեռագրին կայր Յիշատակարան մի հակիրճ, յորմէ կարացի իմանալ զանուն թարգմանչին որպէս և զտեղի ծննդեան նորա, և այդու կարևոր ծանօթութեամբ յալողեցայ, յետ բազում խուզարկութեանց, իմանալ թէ՛ զտեղին և թէ՛ զթուական թարգմանութեանն որ ի լատին լեզուէ փոխեալ էր ի լեզու մեր և գեր:

Յիշատակարանն սակաւատող որ ի վախճան ձեռագրին է օրինակ զայս.

Կատարեցաւ Ղուրամ թարգմանեալ ի լատինացուց բարբառոյ ի Հայոց լեզու. Ձեռամբ Ստեփաննոսի իրովեղոյ իմաստնոյ բանասիրի և բանիրոմ վարդապետի Ջոր Տէր Աստուած վարձաճատոյց լիցի. Ամէն:

Այլ թէ ո՞վ էր Ստեփաննոս վարդապետն իրովեցին, յետ բազում ոգեմաշ և անվհատ խուզարկութեանց ի յորով մատենից և ի ժամանակակից պատմութեանց, հազիւ կարացի գտանել զբարձալին զայն ծանօթութիւն ի գիրս պատմութեանց յա-

ւէտ ճշգրտապատու՛մ պատմաբանին սզգիս՝ Առաքել վարդապետին Դաւրիժեցեայ, որ գոտաջինն տպագրեցաւ յՌամսերդամ (Յամսիէլօղամով) Հուանդիոյի տպարանի Ոսկան վարդապետին, յամին 1669: Որպէս երևի ի գրութենէ Առաքելի Դաւրիժեցեայ՝ ժամանակակից լեւա է ինքն Ստեփաննոս վարդապետի իլովեցեայ և կրօնակից եղբայր նորին իսկ ի գերանջրաշ վանս սրբոյ Էջմիածնի յաւուրս Հայրապետեան Փիլիպպոս կաթողիկոսի, « և յաշակերտութենէ սոյն տեառնս Փիլիպպոսի կաթողիկոսի, և ի միաբանութենէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ Էջմիածնի որ և աստէն իսկ սնեալ և վարժեալ և յաւուրս ծերութեան ժամանեալ », որպէս գրէ ինքն Առաքել վարդապետ ի Յիշատակարանի անդ իւրոյ պատմութեան:

Իսկ յաղագս Ստեփաննոսի իլովեցեայ գրէ այսպէս.

« Ձկնի սոցին պատմեսցուք զայլոյ ումեմ զմարտակենցաղ առնն զարդինաւորութիւնն ուրոյ անուռն Ստեփաննոս վարդապետ յորջորջիւր:

Որ էր ինքն ի մայրաքաղաքէն լովայ և յագզին Հայոց, յագատէ և ի փարթամէ տանէ, բարկաշտից ծնողաց զաւակ, որ ի տես տալայութեան իւրոյ վարժեցաւ ի դպրատունս լովացեց զրոմ և լեզուան լատինացեց, և ուսաւ զարուեստ քերականութեան և զճարտասանականս:

Եւ ի ժամանակին յորում Նիկոլ եպիսկոպոսն լովայ նեղէր և վտանկէր զհայազուն ժողովորդսն, ծնողք Ստեփաննոսիս վասն բարեպաշտութեան և ուղղափառութեան հանեալ զնա ի լովայ առաքեցին ի սուրբ աթոռն Էջմիածնի ի ժամանակս Փիլիպպոսի կաթողիկոսին: Եւ յորժամ էհաս Ստեփաննոս իլջմիածնի ուսաւ զլեզու և զգիր Հայոց և ի բերսն էառ զսպմոս և զարական և զայլ եկեղեցական զուսուռնս:

Այնուհետև սկսաւ ընթեանուլ զՍտոււածաւունջ զիրս և զերկոտասանից վարդապետաց՝ և զՓիլիսոփայից, և վասն զի յառաջմէ գիտէր զլեզու և զգիրս լատինացեց՝ յետոյ ուսաւ և զմերս, և զերկոտեանն առ միմեանս համեմատեալ լով խոկայր ի նոյնն և մտավարժիւր, վասն որոյ առաւելաւ քան զայլ ընկերս իւր, յայն և էր մտօքն սուր և ծննդական, աննօղ և պահօղ և միշտ ընթեցող, և վարուքն մաքրակենցաղ՝ և պարկեշտ: Որոյ զուսուռն և զմարտութիւն վարուց տեսանելով ամենից վարդապետաց վայնցին առաջի Փիլիպպոսի կաթողիկոսին, և յայն և ինքեան իսկ տեսան Փիլիպպոսի տեսանելով զարժանաւորութիւն նորա, կոչեաց յես գերադրական ի փաստ, զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահանայ ետ նամ զիշխանութիւն վարդապետական:

Եւ ինքն Ստեփաննոս վարդապետ օր ըստ օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ՝ և պարկեշտիւք վարուք, վասն որոյ ընկալաւ զնորոս ի Հոգւոյն սրբոյ և ի նորին պարգևաց թարգմանեաց զորս զիրս ի լատինականէ գրէ և ի լեզուէ ի Հայ գիր և լեզու, որոց մինն է Յօսէպոս պատմագիրն:

1. Սոյն այս թարգմանութիւն պատմութեան Յովսէպոսի տպագրեցաւ ի տպարանի Սրբոյ Էջմիածնի յամին 1781՝ արքեպիսկոպի ծախիւց Կոր - Զուգայեցի մաւռոսի Պարոն Խաչկայ Պօղոսեան, որպէս ի յայտ գայ ի Յիշատակարանէն, յորում ի մէջի այլոց տպագրիւնս աւգ. « Եւ մինչ սկսեաց տպել զգիրքս, թէպէտ և եկին ի ձեռս մեր օրինակց զրեցեալք յայլ զրէաց, ոմանց ստոյգք և ոմանց սիւաք, այլ մեք զայնս հեղինակի գրքոյս միայն համեմտեցաք, և զուպեմք՝ որ կայ ի մէջի ի հեղինակէն ստոց, այս է ի ձեռագրէն՝ զոր նոյն ինքն իրավօք Տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր լուծաւ, որ և նոյնն եղեալ կայր ի գրատանս սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Երբմէ օրինակեցաք զուպեմք՝ ոչ ինչ յաւեալեալ կամ պակասեցուցեալ, և ոչ փոփոխեալ ինչ: Զակատ մասնէն է օրինակ զայս.

« Փիքը պատմութեանց Յովսէպոսի երբայեցոյ արաւ - « րիւս յաղագս պատերազմին Հրէից ընդ Հուովմայեցիս, « և աւերման Նյուտաղէմի, Թարգմանեալ և լատինացեց

« բարբառոյ ի Հայոց լեզու, ի ձեռն ուրուճ իլովացեայ « Ստեփաննոսի քանին Աստուծոյ սպասաւորն »:

Երկրորդ ճակատ մասնին յորում է յայտ գայ և թուական թարգմանութեանն է այսպէս.

« Պատմագիրք արարեալ Յովսէպոսի երբայեցոյ յա - « զագս պատերազմին Հրէից ընդ Հուովմայեցիս, և աւեր - « ման Նյուտաղէմի և տահարին Շոյ: Թարգմանեալ « ի լատինացեաց բարբառոյ ի մեր լեզու, աշխատաւք. « րուքեմք երջանակալքոն Միսեալիս Փրիստոսաւջ սրբոյ « զպէտ Տեառն Ստեփաննոսի գերիմաստ վարդապետի « իլովացոյն, քաշնամուտ և հարազատ թարգմանչի, և « ի թուականութեան մերում ՌՃԹ: Իսկ նարդնիս « տպագրութեան ի լոյս ածեցեալ է ստոյգ ձեռագրէ « նոյնոյ թարգմանչին ի լուսակառոյց աթոռս սուրբ « Էջմիածնի, ի տպարանի սրբոյն Փրիքօրի լուսաւորչին « մերոյ ի թուոյ Փրիլէին 1781 և ի մերում թուականին « ՌՄՂ »:

Հետաքցցեր է իմանալ թէ զի՞նչ եղան միւս թարգմա-

Բայց ոչ բովանդակն, այլ զայն միայն, որ ի վերայ Երուսաղէմի ջաղափրին, և Հրէից ազգին պատերազմունք յարեան՝ որ է վեց հատոր: Եւ երկրորդ՝ Գիոնէսիոսի արիսպագացոյ գիրք, զի թէպէտև առաջին թարգմանեալն Ստեփաննոսի Սիւնեցոյն զոյր ի մէջ մեր, այն համառօտաբոս և դժուարասկանալի էր, իսկ սորայս թարգմանեալն ևս նոյն է, բայց զհարասականալի է՝ որ ոչինչ մնայ անհաս յընթերցողէն, զի մեկնութիւնն յաճախ է և դիրարհաս: Եւ երրորդ գիրք՝ որոյ անունն է գիրք պատճառաց, այլ և կոչին զոս զմեր քան զբնականս, որ է Աստուածաբանութեան գիրք, զի Աստուածաբանութիւն է ամենայն բան նորա՝ և է ինքն պրակք երեսուն և վեց: Չորրորդն գիրք՝ բանք առակաւորք՝ որ զվարուց և զկենցաղավարութենէ մարդկան պատմէ իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր լատինականաւ լեզուաւն, հայելի վարուց. և յորժամ թարգմանեցին ի Հայոց լեզուս այլուի գնոյն մակագրութիւն մակագրեցին հայելի վարուց, և յոժ համող և ակնորժ են բանք այտորիկ զրոյ: Արդ՝ մինչև ցարդ՝ այսօրն զարդիւնս արար սա յեկեղեցին Հայոց»: (Տես զՊատմութիւն Առաքել վարդապետի (Ամստերդամ) յէջ 398-400):

ՄԵՐՈՒՎ 8. ՍԵՔՍՏԱՏ

(Շարունակելի)

Նութինք Ստեփաննոս վարդապետի իւրովացոյ զորոց յիշատակէ յակնէ յանուանէ պատմագիրն Առաքել յեւրոս պատմութեան: Տպագրեցան արդեօք այնպիսի թէ յանկան փոշոյ եղն ցեցակեր ի վանս Սրբոյ Էջմիածնի:

Չ Ա Ր

Ռուսական այս բառը, ինչպէս նաև գերմանական իմպերատոր, յառաջ եկած են լատին caesar = կայսր-ի (imperatore) իմաստով: Ռուս լեզուին մէջ ձոր կը նշանակէ բագաւոր և ոչ կայսր՝ որ աւելի ընդարձակ և գերազայն իմաստ ունի և յիլուի ռուս արքայն կոչուած էր կայսր (imperatore) ամբողջ Ռուսաց և ձար Քաղաքնի, Աստրախանի. Սիպերիոյ և այլն: Ռուսք ուրիշ թագաւորները կը կոչեն ռալի:

Ռուսաստանի կայսերք կը պարծէին թէ Արեւելեան կայսրութեան ժառանգներ են, վասն զի իվան Գ. ամուսնացաւ 1472ին թովմաս Պալէոլոկի Արևելքի վերջին կայսեր եղբոր զստեր՝ Սոֆիայի հետ. անոր համար կ. Պոլիս ռուսերն կը կոչուի Զարիկրատ «Քաղաք Զարին»:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՆՈՒԳԻՐՔ
Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԺԴ.

ՀէֆիՄԱՐԱՆ ՍԻՄԷՈՆ ԿԱՄԱՐԿԱՊՅԻՒ

(Շար. տես Բաղմ. 1924, էջ 74)

Յիշատակարանները հետեւեալներն են.

- « ԳԻՐԲՍ ՈՐ ԿՈՉԻ ՀէֆիՄԱՐԱՆ »
- « ԱՐԱՐԵԱԼ Ի ՅԻՄԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՊԵՏԱՅՆ »
- « Օղեւն՝ հոյի Սորբ Աստուած Հլմարիտ »
- « ԳՐԲԱԼ ԵՂԵԻ Ի ՆՈՒԱՍՏԷ. »
- « ՓՐԿԶԻՆ ԵՄԱՌԱՅ ՍԻՄԷՈՆԷ. »
- « ԱԿԱՅ ԳԻՒԴԷՆ ԿԱՄԵՐԿԱՊԷ. »
- « ԱՐՈՒԵՏՏԸՆ ԻՐ ՍԱՌԱՅ Է. »
- « ԵՒ ՀՕՐՆ ԱՆՈՒՆՆ ԳԻՐԳՈՐԻԷ. »
- « ԸՆԹԵՐՏՕՂԻՆ ՈՂՈՐԾԻՍ ՏԱՅԷ. »
- « ՄԻՈՅ ՀԱՅՐ ՄԵՐԻՒ ԱՄԷՆ. »

« Ես իմ կենաց մէջ ինչ որ յսեր եմ
 « փորձեր եմ քե մեզի որ պատաներ է,
 « կամ այոց, ամենն ի յայս ցրբուց գրեցի
 « ա ի յիւնոյ յիշատակի համար. որ և
 « յիշատակն արդարոց օրհնարեամք եղիցի,
 « եղիցի. Ամեն: »

« Որ և գրեցաւ տնտրակս ի բուսակահիս
 Հայոց Ռուր. յունվարի Ա.

« Ի Մարտաքաղաքն Ըստանպոլ

« Ի շնչին Ետար Զարոյրեկն վասպու-
 բականցոյն կղ. զժագրեցեալ

Յայտնի է որ Հէքիմարանիս Հեղինակը ինքն է սոյն սողերուն զբողը, այսինքն Ակնայ կամարկապ զիւղացի Սիմեոն Գրիգորեան՝ արհեստով առաաֆ (լուծալափոխ) եղող անձը, որ կ'երևի՝ միանգամայն բժշկութեամբ ալ կը պարապի եղեր, բայց այս հատորին բուն զրիչը՝ ինչպէս կը